

# Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

## ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ

ԵԿԵՂԵՑԵԱՅ ԳԻՒՂՕՐԷԻՅ ՎԻՃԱԿԻՆ ՀԱՅՈՑ

ՇԱՄԱԽՈՅ:

(Շորհանգիլն է վերջ):

Ճանապարհն՝ որ տանուձեր մեզ ի Վերք՝ էին էջ լերին, և մեք յերեկոյեան ժամերգութեան ժամանակ հասանք ի Վերք. և կարևոր օրհնութիւն տալուց յետոյ ժողովրդեան իջեանեցաք Վահիճու զաւտաւկի գործակատար տէր Բաղդասար խաչակիր քահանայի տանն, և այն տեղն զիշերեցաք նոյնպէս տրտմութեամբ սրտի և հոգւոյ ընդ մահ Վեհափառ Հայրապետին մերոյ: Վերք զիւզն բաղկանուձէ մի հարիւր երեսուն միայն Հայազգի գերդաստունից. նա շինուած է մի հովտաձև ձորամէջ տեղումն, որոյ ծայրն հարաւային կուսէ խոնարհումէ դէպ ի դաշան: Եւմեն տուներ ունին իրանց հայեցուածք դէպ ի դաշան տարածված հարաւային կողմն զիւզին, ամեն տան սրահից մի գեղեցիկ տեսարան է կազմում այս դաշան ամեն տեսողաց. երկու հորիզոնով նա ներկայանումէ տեսողաց, մի հորիզոնն աղեղնաձև որոշումէ ներքին դաշան վերին դաշտից, և միւս հորիզոնն բաժանումէ անբաժան կերպիւ Ասսպից ծովն դաշտից: Եյս զիւզի օդն շատ առողջարար է, ունի լաւ սառնորակ աղբիւրներ, այդեստանիք անջրդի. ունի լաւ վարելահողեր դաշտումն և սարումն. ունի մի լաւ եկեղեցի շինած բնակչաց արդեամբք. այս եկեղեցին

յառաջ կամարակապ է ելած. բայց 1859 թուականի ահագին երկրաշարժից քայքայված լինելով կամարներն՝ քանդած էին և փայտածածք են արած: այս զիւզի զանազան քաղաքներ տարածված բնակիչներից երևելի մարդիկ են դուրս ելած, ինչպէս Շամախումն են պարոն Պետրոս և Մովսէս Աերսիսեանց, որոնք անմահ յիշատակներով հոգեսիրութեան և ազգասիրութեան երեւելի են Շամախու Հայոց մէջ. սոքա իւրանց արդիւնքով օգնականութիւնով տեղւոյն բնակչաց մի հիանալի հոյակապ եկեղեցի են կառուցած Շամախի քաղաքումն. քսան տարի յառաջ այս եկեղեցւոյ արեւմտեան կողմն շինուած է Եռաջնորդարան երկյարկեան: Մեք ևս 1863 թուին յանձնն առնելով վիճակաւորութեան պաշտօն՝ ինչ ժամանակ Շամախի մուտ գործեցինք՝ հոգ տարանք ուսման տարածութեան այս քաղաքումն. ուստի և շրջելով Տփխիսու վիճակումն ազգասէր Վեհափառ Հայրապետի Մերոյ Տեառն Տեառն Մատթէոսի հրամանաւ ժողովեցաք բաւականին գումար, այս եկեղեցւոյ հիւսիսակողմն շինեցինք ուսումնարան երկյարկեան, և ժողովեցինք աշակերտներ, և սկսանք այս տեղս տարածել լուսաւորութիւն Շամախու Հայոց վիճակումն: Վատանվումն և այլ քաղաքներում Վերքեցի Հայազգի բարեհամբաւ անձինք. այս զիւզումն Արեքշաբաթի օրն էր 30 օդոստոսի՝ անցուցինք եկեղեցական գործոց և հաշուոց վերազնուութիւնով պարապելով. իսկ Չորեքշաբաթի աւուր առաւօտեան ժամ 8ին մեկնեցաք Վերք զիւզեցն՝ և այն սարի ոտով կամ գիշով դէպ արևելք երևի վերստաչափ դնալով մուտ գործեցինք ի Բեալեանք:

Այս զիւղն է Հայոց, ունի հարիւրաչափ  
 դերդաստուն, ունի շատ վարելահողեր դաշ-  
 տումն, որ տարածված է հարաւային կող-  
 մումն այս զիւղի: Շատ ցաւ եղև հոգւոյ  
 խնց տեղւոյն եկեղեցւոյ աղքատութիւն  
 և անբարեկարգութիւն: Մի Աստուածա-  
 մօր պատկեր անդամ չկար այս եկեղեցումն,  
 թողղնթերցանելի եկեղեցական մատեանս:  
 Այս ամեն անկարգութիւններ յառաջա-  
 ցած էր Շամախեցի տէր Խարայել քա-  
 հանայի ձեռքով՝ որ ամենեին չզիտէ քա-  
 հանայութեան պատիւ և արժանաւորու-  
 թիւն, սա միայն իրան զաւակացն է հոգս  
 անում, այսպէս են և այս վիճակի շատ ան-  
 արժան և տգէտ քահանաներն, ցաւօք  
 սրտի դուրս գալով եկեղեցուց սկսայ յոր-  
 դորել ժողովրդեան, որ մի ձեռք եկեղե-  
 ցական զգեստուց հոգս անեն, և մի Աս-  
 տուածամօր պատկերի, որք և խոստացան  
 նոյնն կատարել յաջողութեամբ Աստու-  
 ծոյ:

Այս տեղի ժողովրդեան զխաւոր իշխա-  
 նի մինն՝ Յակոբ անուն՝ ամօք յառաջ մի  
 սկիհ է շինել տուած յիշատակ այս եկե-  
 ղեցւոյ համար, բայց անիրաւ ոսկերիչն՝  
 համ արծաթն է դողացել՝ համ սկիհն  
 էր շատ անպիտան շինել, հեթանոսի նը-  
 ման էր վարվել այս քրիստոնեայ Մատ-  
 րասեցի ոսկերիչ վարդապետն այս մարդոյ  
 հետ: Այս արժանահաւատ բարեպաշտ  
 անձին ես հրաւիրեցի շնեղանայ, այլ ինձ  
 ուղարկէ այն սկիհն՝ որ ես ուղարկեմ Մոս-  
 կուայ և նորն գնել տամ նորա համար:

Երկու ժամ մնալով այս զիւղումն՝  
 ժամ 12ին գիմեցի աստի ի Վիլնայոյ:  
 Ժամ 1ին հասի ի զիւղն, և ինչ ժամա-  
 նակ զիւղն մօտեցայ, ինձ ընդտուջ ելին

հոգեորական և ժողովրդեան բազմութիւն,  
 և որովհետև տեղւոյն նորակառոյց եկեղե-  
 ցին օծելու էի, ուստի առած ինձ հետ  
 սրբալոյս Մեռոնն՝ ուղղակի գիմեցաք յե-  
 կեղեցին: Երանց և կանանց և երեխայոց  
 բազմութիւնն մեր ճանապարհն փակած  
 էին: Ամենքեան միաբերան փառք էին  
 մատուցանում Աստուծոյ այս հոգեոր ու-  
 ռախութեան արժանանալու համար: Այս  
 զիւղումն գիշերելով ի տան միոյ իշխանաց  
 տեղւոյն՝ յառաւօտեան ըստ ծիսի Հայաս-  
 տանեայց առաքելական Աշկեղեցւոյ օծա-  
 նելով սուրբ եկեղեցին, և յետ աւարտ-  
 ման սրբոյ պատարագին հասարակութեան  
 ծախուք պատրաստած ճաշ վայելեալ՝ ժամ  
 2ին զինի ճաշին բազում շնորհակալու-  
 թեամբ տեղւոյն ժողովրդեան բարեպաշ-  
 տութիւնից վերադարձանք անդրէն ի սուրբ  
 Վանս սրբոյն Ստեփաննոսի՝ Ասխավկայի  
 Սաղիանու՝ ժամ տասին:

Թիւրքանդ զիւղն բաղկանայ մի հարիւր  
 և տասն դերդաստանէ ըստ հաշուոյ հին  
 աշխարհագրութեան, ունին սոքա իրանց  
 վարելահողերն դաշտումն և սարումն, ու-  
 նին մի քահանայ Հայրապետ անուն նորոգ  
 ձեռնադրեալ յինէն, որ թէև տկար է զի-  
 տութեան մասին, բայց շատ խոհեմ և  
 համեստաբարոյ անձն է: Իմ շրջապայած  
 զիւղօրէից մէջ միայն սորան տեսի որ ման-  
 կուեք հաւաքած իրան տան ուսումն է տա-  
 լիս, և ազգի լուսաւորութեան հոգս ունի  
 իրան տկար կարողութեան չափով:

Սաղիանու վանքում իբրև սգաւոր մը-  
 նալով, իմ Ատենադպիր Խոսհակ Ազա-  
 րեանցին և դործակատարն Ղօշունլուի  
 դաւառակի տէր Պէտրոզ քահանայի Շահ-  
 վերտեանց ուղարկեցի ի Մէյսարի և ի

Մատրասայ, որք քաղաքամերձ գիւղերին գնան տեղւոյն եկեղեցեաց հարկաւոր վերադննութիւն անեն իմ կողմիցն՝ և վերագառնան Սաղիանումն :

Մերեւել ընթերցող՝ եթէ կամիս տեղեկանալ այս գիւղօրէից դրութիւն, ահա այսպէս են :

Մատրասայ գիւղն գտանվումէ հարաւակողմն Շամախուց 7ն վերստ հեռի յիշեալ քաղաքից : Սա ունի մի գեղեցիկ դիրք բաւական հարթ սարադաշտի վերայ, որոյ չորս կողմն անկաճ են պատուական այգիք, և այգեաց կից են շատ պարարտ վարելահողեր : Գիւղն բաղկանումէ երեք հարիւրի չափ Հայազգի գերդաստունից, բնակիչք ընդհանրապէս խօսումեն երկու լեզուաւ միմեանց հետ Հայերէն և Թաթերէն :

Եյս գիւղն ունի մի հոյակապ ընդարձակ եկեղեցի նորոգ կառուցեալ բնակչաց արդիւնքով և ժողոված դրամով Եստրախանայ՝ Շամախու վիճակներից :

Երձ եկեղեցեոյ հարաւային կողմն գիւղին ձորամէջ տեղումն կայ՝ հանք, որից արտադրվումէ լաւ տեսակ կպրածիւթ, և սորա համար բնակվումեն շարունակ այստեղ զինուորներ, որոնք օրական հաւաքումեն ջրի երեսից այս ձիւթն, և լցնելով բոշկաներ սայլերի գործածութեան համար են տանում :

Մէյսարի անկանի Երեւմտեան կողմն Շամախուց եօթն վերստ հեռաւորութիւնով, ունի քառասուն Հայազգի գերդաստուն, որք պարապումեն վարուցանիւ և այգեգործութիւնով :

Երեւմտեան կողմն այս գիւղն ձորաղլխի վերայ շինած կայ վանք՝ որ ասվումէ հասարակ

րակ անունով Մէյսարու վանք : Եյս վանք Շամախու վիճակի Հոգևոր արդեանց պակասութեան և ժողովրդեան աղքատիկ դրութեան համար ի ցաւ սրտի տեսողաց ամայացած է և քայքայված շատ տեղ շարժից : Եյս վանքն յառաջ ժամանակաւ ունեցած է բաւական վարդապետ միաբան ինչպէս երևումէ իցերի աւերակներից և գերեզմանատնիցն : Աւնեցել է երկու պատուական աղբիւր, մին սարից բերած ագուկայիւ վանքի բակի մէջ, միւսն բնակչաց համար և վանքապատկան և գիւղապատկան անասնոց ջրելու համար արեւմտեան կողմն ձորամէջ շինած որպէս ասեն տեղւոյն վանահայր Գալուստ վարդապետի աշխատութիւնովն : Եյս վանքն նոյնպէս և սուրբ Ստեփաննոսի Սաղիանու վանքն մինչ ի հաստատութիւնն հոգևոր Ետենին ի Շամախի՝ շէն են եղած և լի բաւական միաբանութիւնով :

Ենհոգութիւնով շատ վարելահողեր սեպհականել են իրանց տեղւոյն բնակիչներ, և վանքերն ձգել են նեղ և անձուկ դրութեան մէջ :

Եյս իմ այցելութիւն եկեղեցեաց գիւղօրէից վիճակին Հայոց Շամախուց աւարտեցաւ ի 6 սեպտեմբերի, որ օր դարձայ ի Շամախի : Եյս այցելութիւն ինձ շատ մխիթարական եղև, որովհետև բաւականին ծանօթացայ սորանով ժողովրդի դրութեան :


Եյս այցելութիւնովս կարացի նկատել բոլոր գիւղականաց համար Թխական Գըպրոցներ բանալոյ յարմարութեան տեղեր, որոց առաջինն է Սաղիանու սուրբ Ստեփաննոսի վանք իրան ամենատեսակ լաւութիւնով և օդոց և ջրոց պատուականու-

Թիւնով, երկրորդ՝ Մատրասայ կամ Վարքանջ, երրորդ՝ Լշնզար զիւղն, չորրորդ ի Գիւրջեան Գօշուելու գաւառակի, ի Լահիճու գաւառակի Գալակիայ, Վանքաշէն և Գիւք զիւղօրայք, որոնք թէ իրանց մարդաշատ բազմու թիւնով թէ օղոյ առողջու թիւնով յարմար են ուսումնարանի :

Յաւալին այս է, որ ոչ քաղաքումն և ոչ զիւղօրայքումն չկան եռանդոտ և ազգասէր անձինք, որ ինձի օգնութիւն անեն, և շատ զժուարութիւնով հասկանում իմ առաջարկութիւններն իրանց ապագայ վիճակի և իրանց զաւակաց բարօրութեան համար :

Շատ մխիթարական կը լինէր ինձ եթէ զո՞նէ մի երկու երեք ուսումնական երիտասարդներ գտանվէին Շամախումն ինձ օգնական լինելու համար ազգային զործերումն: Միայն եմ բայց վա՛յ միոյն եթէ զլորիցի, և ո՞վ է որ կանգնեացէ զնա :

Ներեսցէ ինձ յարգոյ ընթերցողն փոխանակ մզոն բառի վերստ գրելուս համար. և երկրորդ՝ եթէ չկայ ճշդութիւն ճանապարհների հեռաւորութեան և մերձաւորութեան համար՝ ես կանգնած չէի չարիւմ այս ճանապարհներն, և չափածի հաշուաթուղթն ևս չունէի առ ձեռն, և մանաւանդ տեղագրութիւն չէի անում :



ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ՃԱՇՈՅԻՆ

կ ա մ

Հ Ա Մ Ա Ռ Օ Տ Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

ՌՌԻԲԻՆԵԱՆ ԻՇԽԱՆԱՅ:

Եթէ քանի լրջալի և հետաքրքրական է մեր նախնեաց վերայ գրուած ամեն մի տեղեկութիւն՝ թէ և սակաւ ևս լինի. զոր ամենայն ակորժանօք և տննչանօք կրն՝ թեոնու իւրաքանչիւր Հայրենասէր և բանագէտ: Ուստի հետեւեալ յիշատակարանս ևս՝ որ թէպէտ շատ համառօտ, բայց ի վայելս նաև հրամանաւ Աստուածասէր Լևոն Գ Թագաւորի մերոյ աւագ որդի Ուսումնասէր և Գիտնական Պարոն Հեթմոյ (որ զինի հօրն թագաւորեց)՝ ի թուականի Հայոց 216 (Փրկչ. 1286) օրինակեալ ընտիր մագաղաթի վերայ բոլորգիր մի ճաշոցի ի վերջ յաւելացած կամ գրուած է. որ մանաւանդ պարունակելով մի քանի կարևոր և խիստ հետաքրքրական տեղեկութիւնք Ռուբինեանց վերայ մինչև Լևոն Գ Թագաւոր՝ կարող է մերազնեայ և օտար բանասիրաց հետաքրքիր ուշադրութիւնը գրաւելու արժանի նիւթի հաղորդել, որով կը յուսամք թէ Ազգային պատմութեան և նախնեաց մատենագրութեանց վերայ գէթ դոյզն ինչ պիտանի նշխար ևս նուիրած կը լինիմք :

Ի սմին բովանդակեալ տեղեկութիւնք՝ անշուշտ պէտք է՝ որ ստոյգ և հաւատարիմ աղբիւրներէ՝ այսինքն գրուածքներէ և կամ աւանդութիւններէ քաղուած ու հաւաքուած լինին, և առանց տարակուսելոյ այլոց զրչաց ընդօրինակութեանց առիթներով՝ կամ օտար և անհարազատ ձեռաց տակ սխալանօք փոփոխուած չը լինելոյն վերայ, ըստ որում հեղինակին՝ այն է իւր ընդօրինակողին հարազատ ձեռագիր բնագիրը ունենալով Ս. Աթոռոյս Մատենադարանի մէջ, յորմէ կօրինակեմք մէք և կրն՝ մայեմք ի լոյս միջոցաւ Արարատ ամաղրոյս :

Յիշատակարանը որքան որ համառօտ է, սակայն կրկին՝ իրրև պարտական ձեռով՝ այսինքն՝ Ռուբինեանց հարստութեան ցեղին՝ այն է Պ. Հեթմոյ